— Շամախու թեմի Տ. Առաջնորդի անունով, որով հաստատուեց Տ. Ներսէս վարդապետ Տ. Միքայէլեանը նոյն թեմի եկ. ծխ. դպրոցների տեսուչ։ 19 մարտի. թ. 578.

— Տ. Ներսէս վարդապետ Տէր Միքայէլեանի անունով նոյն իմաստով։ 19 մարտի թ. 579.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց Աղէքսանդրապոլի գաւառի Հառում գիւղի Սրապիոն քահանայ Ղազարեանին առակել հոգևոր կոչումից իւր խնդրի համաձայն։ 24 մարտի թ. 603.

— Շրջաբերական կոնդակ Ռուսահայոց բոլոր թեմական առաջնորդների անունով, որով պատուիրուեց շրջագայել գէթ 3 տարին մի անգամ իրանց թեմերը քննել ամենայն ինչ և իրանց դիտողութիւնները զանազան հաստատութիւնների մասին զեկուցանել Ս. Էջ. Սինոդին։ 24 մարտի թ. 611—615.

— Խրախուսական և օրհնութեան Թիւրքիոյ Հայոց Ամեն. Պատրիարք Տ. Եղեշէ արքեպիսկոպոս Դուրեանի անունով վերատին Պատրիարքական աթոռ դարձի առթիւ։ 15 մարտի թ. 531.

Հայրապետական Պարգևներ

Կոնդակ Ս. Երուսաղէմի վանքի միաբան Տ. Եղիշէ եպիսկոպոս Զիլինկիրեանի անունով, որով եպիսկոպոսական Պանակէ կրելու իրաւունք շնորհուեց։ 3 մարտի թ. 431.

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԸ

Փետրվարի 1-ին Սինոդը լսեց Սամուէլ և Եւդոկիա Ելակման հրէաների գրաւոր խնդիրը իրենց հայ—լուսաւորչական եկեղեցու ծոցը ընդունելու մասին և այս առթիւ որոշեց. շրջաբերական հրամանով բացատրել բոլոր կոնսիստորիաներին՝ նախ՝ որ հրէաներին Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունելիս անհրաժեշտ է պահանջել խնդրատուներ-

րից ծննդեան վկայական, միանգամայն ի նկատի ունենալով միշտ Սինոդիս անցեալ տարուայ նոյեմբեր 13-ի շրջաբերականը նոյն խնդրի վերաբերութեամբ և երկրորդ՝ եթէ խնդրատու հրէաները պսակուած են հրէական ծէսով, նոցա ամուսնութիւնը վաւերական ճանաչելով հանդերձ՝ պէտք է օրհնել պսակը Հայաստանեայց եկեղեցու ծիսի համաձայն, որ համապատասխանում է և Օրին. XI հատ. I մասի 22 յօդուածի իմաստին։ Թ. 55.

— 3-ին Սինոդը, լսելով Վեհափառ Կաթուղիկոսի սոյն տարուայ յունուարի 22-ի № 22 կոնդակը, որոշեց. նախ՝ տալ Զուարթնոցի աւերակների վանահայր Տ. Խաչիկ վարդապետին ժապաւինեալ մատեան և պատուիրել արձանագրել նրանում մուտքը և ելքը և տարուայ վերջին ներկայացնել Սինոդ ի գննութիւն, և երկրորդ՝ պատուիրել նոյն վարդապետին Ս. Հռիփսիմէի վանքի վանահայր Տ. Գարեգին վարդապետի հետ ցուցակագրել մանրամասն Զուարթնոցի կալուածը, դոյքը, կահ-կարասին և անասունները, ցուցակի իսկականը պահել իւր մօտ, իսկ նրա վաւերական պատճէնը, ցուցակագրողների ստորագրութեամբ ներկայացնել Սինոդին։ Թ. 69.

— 8-ին Սինոդը, լսելով Բագուեցի Աւետիս Բալայեան Ղուկասեանցի 60,000 ռ. կտակի մասին զեկուցումը, որոշեց. որովհետև բարեյիշատակ Աւետիս Ղուկասեանի կտակի ճիշտ իմաստի համեմատ յիշեալ դրամագլուխները (60,000 ռ.) պիտի յանձնուեն Ս. Էջմիածնի վանքին հանգուցեալի կամքի համաձայն գործադրելու և կտակը կատարող նշանակուած են Ազգիս Վեհափառ Հայրապետը և Մ. Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնը, ուստի Վրաստանի Հայոց առաջնորդի ձեռքով պահանջել հանգուցեալ Ղուկասեանի կտակակատարներից առանց յետաձգելու մատուցանել Սինոդիս կամ 60,000 ռուբլի դրամագլուխը կամ, եթէ այդ դրամն արդէն պահ է տուած որ և է բանկային հաստատութեան, վերջնիս անդորրագիրը՝ դրամագլուխն ի պահ ընդունած լինելու

մասին, Բացի սրանից տեղեկացնել հանգուցեալ Ղուկասեանի կտակակատարներին, որ եթէ նրանք որ և է ցանկութիւն ունին յայտնելու կտակած գումարի գործադրութեան մասին, կարող են այն մատուցանել ի գիտութիւն և ի տնօրէնութիւն Նորին Սրբութեան։ Թ. 97.

— 24-ին Սինոդը, լսելով Նորին Սրբութեան ամսոյս 18-ի № 357 կոնդակը, որոշեց. Նորին Սրբութեան կոնդակի համաձայն Սինոդիս անդամ Տ. Յուսիկ վարդապետին քառամսեայ արձակուրդ ստացած լինելու պատճառով բացակայ համարել Ատենիս նիստերից մինչև տարւոյս յունիսի 18-ը, յանձնելով կառավարչական Մասի կառավարութիւնը Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին մինչև Տ. Յուսիկ վարդապետի վերադարձը։ № 135.

— 10-ին Սինոդը, լսելով Շուշու գաւառի Խնձորստան գիւղացի ճեմարանաւարտ Յակովբ Տէր-Յովհաննիսեանի խնդիրը քահանայ Ձեռնադրելու համար, որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի կոնսիստորիային ընդունել Խնձորստան գիւղի բնակիչ Յակովբ Տէր-Յովհաննիսեանցին հոգևոր կոչման մէջ՝ նոյն գիւղի քահանայ ձեռնադրելու համար, իսկ ձեռնադրութեան համար տալ առաջադրութիւն Շամախու թեմի Առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսին։ Ընծայացուի վկայականները վերադարձնել Ղարաբաղի կոնսիստորիային։ Թ. 98.

— 17-ին Սինոդը, լսելով Հադրութ գիւղի բնակիչ Թեմուր Տէր-Մովսիսեանի խնդիրը քահանայ ձեռնադրելու համար, որոշեց. նկատի առնելով նախ՝ որ Արշակ քահանայ Ոսկանեանցը թեմական իշխանութեան և ծխականների թոյլտուութեամբ հեռացած է արդէն Հադրութ գիւղից, ուրեմն այդ գիւղում մնում են միայն երկու քահանայ, և երկրորդ՝ որ Հադրութի նման բազմամարդ գիւղում անհրաժեշտ է ունենալ դպրոցաւարտ քահանայ՝ ուստի թոյլ տալ Ղարաբաղի կոնսիստորիային ընդունել Թեմուր Տէր-Մովսիսեանին հոգևոր կոչման մէջ ձեռնադրելու Հադրութ, Քոչբէկ և Մէլիքջանլու գիւղերի

համար քահանայ և յանձնարարել Եռամխու թեմական Առաջնորդին կատարել Տէր-Մովսիսեանցի ձեռնադրութիւնը։ Թ. 124. վկայագիր ունենալ նշանակել։

—Նոյն օրը Սինոդը, լսելով Վեհափառ Կաթուղիկոսի փետրուարի 15-ի № 352 կոնդակը, Երուսաղէմի Ս. Յակոբեանց Աթոռի պատրիարքական Կ. Պոլսի Փոխանորդ՝ Տ. Եղիշէ Ծ. վարդապետ Չիլինկարեանին եպիսկոպոս ձեռնադրելու մասին, որոշեց. յանձնարարել Մայր Աթոռի միաբան Տ. Արիստակէս վարդապետին երդուեցնել Տ. Եղիշէ Ծ. վարդապետին Ս. Իջման սեղանի առաջ ոտաբոս նուագ կարգով առաջիկայ շաբաթ օրը, նոյն ամսոյ 24-ին, առաւօտեան ժամը 11-ին։ Թ. 127.

Մարտի 8-ին Սինոդը որոշեց. Վեհափառ Հայրապետի հաստատած նախահաշիւների պատճէնը ուղարկել Մ. Աթոռի Վանական կառավարութեանը և ադարակի կառավարչին ի գործադրութիւն, պատուիրելով նախ՝ նախահաշուից դուրս ինքնագլուխ, առանց Սինոդի կանխագոյն թոյլտուութեան ծախսեր չանել և երկրորդ՝ մի յօդուածի գումարը չը գործադրել միւս յօդուածի տեղ։ Թ. 154.

Նոյն օրը Սինոդը, լսելով Վեհափառ Կաթուղիկոսի մարտի 3-ի № 444 կոնդակը, միաբանական նոր ընտրութիւնների մասին, որոշեց. նախ՝ ազատ համարել Տ. Խաչատուր վարդապետին տպարանի տեսչի պաշտօնից և կարգել նրա տեղը Տ. Արտակ վարդապետին, պատուիրելով առաջնին՝ յանձնել և երկրորդին ստանալ օրինական ցուցակով Սինոդիս անդամ Տ. Սահակ վարդապետի ներկայութեամբ տպարանի բոլոր գոյքը, հաշիւները, գործերը և առձեռն դրամը և ցուցակը ներկայացնել Ատենիս. երկրորդ՝ Տ. Ղևոնդ եպիսկոպոսին, բառնալ եղած կտրը, ազատ համարել Վանական Կառավարութեան նախագահութիւնից և կարգել նրա տեղը Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանին. և երրորդ՝ պատուիրել Սինոդիս գանձապահին տալ Տ. Ներսէս վարդապետին ռո-

ճիկ նոր պաշտօնի համեմատ, ամսական յիսուն ռուբլի և սննդադրամ՝ պաշտօն ստանձնելու օրից, Տ. Իսահակ վարդապետին ռոճիկ և սննդադրամ մինչև նոր պաշտօնատեղին ճանապարհ ընկնելու օրը և ճանապարհածախս Սինոդիս շրջաբերականի համաձայն փոխարինաբար և ապայետոյ պահանջել Ս. Խաչ վանքի արդիւնքից, Բեսարաբիայի կոնսիստորիայի ձեռքով, և Տ. Արտակ վարդապետին՝ պաշտօնի համեմատ ռոճիկ և սննդադրամ այս մարտի 1-ից։ Թ. 157.

Նոյն օրը Սինոդը, լսելով Ճալէթի վանքի կալուածքը, այն է՝ վարելահողերը, թթենիների անտառը և ուխտաւորների արդիւնքը 6—9 տարի ժամանակով կապալով տալու մասին զեկուցումը, որոշեց. պատուիրել Ղարաբաղի կոնսիստորիային տնօրինել կապալով տալու հրապարակական աճուրդախօսութեամբ Ճալէթի վանքի անտառի, թթիների և այլ արդիւնքները, սկսելով աճուրդը տարեկան երեք հարիւր ռուբլուց, ինն տարով։ Անտառի շահագործումը պիտի լինի արքունի անտառների համար հաստատուած կարգով։ Թ. 161.

Մարտի 1-ին Սինոդը, լսելով հանգուցեալ Կիւրեղ վարդապետի թողած գոյքի մասին զեկուցումը, որոշեց. Որովհետև հանգուցեալ Կիւրեղ վարդապետի գոյքը արդէն ստացուած է և յանձնուած ի պահ ում որ պէտք է, ուստի այս գործը կարճել և ժամանակին տալ Սինոդիս դիւանը պահելու։ Թ. 173.

Մարտի 15-ին Սինոդը, լսելով մահմեդական Հումբաթ Մահմէտ օղլու խնդիրը հայ-լուսաւորչական եկեղեցու գիրկը ընդունելու մասին, որոշեց. Վերադարձնելով գործը, պատուիրել Վրաստանի Հայոց կոնսիստորիային կարգադրել ընդունել խնդրատու Հումբաթ Մահմէտ օղլուն հայ-եկեղեցու գիրկը և կատարածի մասին յայտնել Սինոդիս։ Թ. 177.